

'ի իւր գողտփաղը կը դարձնէին : Ազատ , անկախ , մերթ զկէս յերկինս , ներշնչութեան շարժման մէջ և իւր մտածութեանն գոհ՝ ծառուղեաց մէջ կը յաճէր : մերթ իւր ընթացքը կը փութացնէր : մերթ կը մեղմացնէր , մերթ զկայ կ'աւելոր եւ մերթ կ'ամփոփուէր : որոնելով , չգտնելով , կամ գտնելով արտագրել կը փութար , կը գրէր , կը ջնջէր , 'ի նորոյ կը գրէր՝ վերտփն ջնջելու հա՛մար : Ճառին բոլոր մասերը՝ միեւնոյն խնամով , մի և նոյն ճաշակով և մի և նոյն արուեստով հաւաքելով , յարգարեւով բազմոյց կ'արտասանէր՝ ամեն անգամ արագրելով և վերջապէս իւր ճիգերէն գոհ 'ի նորոյ առանձինն առողջաբանութեամբ կը կարգար զայն , 'ի զուարճութիւն և իբր 'ի փոխարինութիւն իւր այնչափ վատակոյց : Իր ասացուածքը իբր ոտանաւոր այնչափ անդամ կը կրկնէր , որ իւր յիշողութեան մէջ կը դրոշմուէին , իւր բարեկամաց աւջեւ կ'արտասանէր զայն եւ կըստիպէր զանոնք , որ ինքնին բարձրաձայն կարգան զայն իւր ներկայութեամբ , ինքն անաչառ դատողութեամբ սենկնդիր կը լինէր և անդու նորա վերայ կաշխատէր , կամելով 'ի կատարելութիւն բարձրանալ , ուր անհամբեր դրողէտ մի երբէք չէ կարող ժամանել ր :

Ամեն անոնք , որ Մոնդպարի փառաւոր պարտիզին թաւաստուէր ծառուղեաց և նորա անկարելի գրից այցելած են , սոյն պերճարան անցից ստորագրութեան մէջ աւելի խանդ ու հրապոյր պիտի գըտնեն :

(Շարունակելէ :)



ԱՐԴԱՐ ԲՈՂՈՔ ԱՆԻՐԱԻ ՀՍՐՈՒՄԾԻ ՄԸ ԴԵՄ

« Եթէ չար ինչ խօսեցայ ,
վկայեա՛ վրան չարին , ապա
թէ ոչ ընդէր հարկանես ր :

Մեր նախորդ յօդուածէն արդէն տեսնուեցաւ թէ 'ի ներկայութեան Հրէից քահանայապետի և համօրէն օրինական դասուց՝ տեսնուած դատին մէջ քանի՞ օրինաւորութիւն և իրաւիկ արդարութիւն կը թաղաւորէր , տեսնուեցաւ թէ՛ Աստուծոյ քահանայք ,

արդութեան սպասաւորք , արդարութեան պաշտօնեայք եւ օրինաց գործադիրք ինչ ոգով և ինչ զգացմամբ նոյն դատաւորական ատենը խմբուած նենգաւոր խորհուրդներ կ'երկնէին և սարսնութեան հնարներ կ'որոնէին անարատ և անբասիր Աստուծորդւոյն դէմ . տեսնուեցաւ թէ՛ մեծ քահանայապետն , Մովսիսի փոխանորդըն , Աստուծոյ պատգամաւորն և արդարութեան ու օրինաց գործադիր գերագոյն պաշտօնեայն ինչպէս կը դատէ արդար ամբաստանեալ մը եւ նորա հաւատարիմ արբանեակն ինչ յանդուգն վարմունք կ'ունենայ Յիսուսի անմեղ , վստահ և համարձակ պատասխանատուութեան դէմ հակառակ օրինաց և արդարութեան ապտակելով զնա մի այնպիսի պարագայի մէջ , ուր մահու և կենաց խնդիր կը յուզուի . և ուր մարդն պէտք է լռէ և միայն օրէնքը խօսի և գործէ : Այս ամենն նենգութեանց , այս ամենն դաւաճանութեանց , այս ամենն մեքենայութեանց , անիրաւութեանց և բարբարոսական բռնութեանց դէմ , տեսնուեցաւ նաև Աստուծորդւոյն Յիսուսի ցոյց տուած անխռով , հեղահոգի և համարձակ ընթացքը , որ հաւատարիմ իւր խաղասիրական վարդապետութեան՝ մարտիրոսական համբերութեամբ կը տանի ամեն զրկանաց քանի որ ուղղակի իւր անձին դէմ են , և կ'աշխատի բարութեամբ յաղթել չարութեան ոգւոյն , և քաղցրութեամբ ամօքել դառնութեան պտուղը : Այս քաղցրութիւնը և այս հեղահոգի խոնարհական ընթացքը փոխանակ մեղմելու հրէական կատաղի կրից թափը , փոխանակ արթնցնելու նոցա թմրած խիղճը և խղճահարելու գիրենք իրենց անարդար սրարմանց վերայ , ընդհակառակն կը տեսնուի որ աւելի ճարակ

կրտայ անոնց զրդուման և աւելի կը բորբոքէ նոցա վատ և վայրենի դգաւցումները, որով կը քաջաւերուին կարծես իրենց դառնութեան թիւնի մինչեւ յետին կաթիլը քամել իրենց վերէժինդրութեան առարկային վերայ, որ անմուռնջ և անտրտունջ կ'ընդունէ ամենայն՝ ինչ որ թշնամիէն կը գայ, ուստի Յիսուս տեսնելով այս ամենը և զգալով որ թէ՛ խոհեմութեան, թէ՛ խոնարհութեան և թէ՛ հեղութեան սահմանը լեցուեցաւ և անկից աւելին արդարութիւնը ռանակոխ ընել տալէ, այն վերջի ամենաանիրաւ հարուածին դէմ արդար բարկութեամբ սրտմտելով՝ կը փոխէ իւր խոնարհական ընթացքը եւ կը խզէ մինչ ցայն կէտ համբերատարութեամբ պահած լուութեան կասկանքը՝ բողոքելով անարդարութեան դէմ այն խղճահար և ազդու խօսքով, «Եթէ չար ինչ խօսեցայ վկայեա՛ վասն չարին, ապա թէ ոչ ընդէ՞ր հարկանես »:

Յիսուսի վարմանց սոյն փոփոխութեան հետ՝ կը փոխուի նաև մեր խորհրդածութեան առարկայն. հոս հարկ կը լինի կանգ առնուլ մի քիչ և խորհիլ թէ ի՞նչ է այս փոփոխութեան պատճառն եւ ի՞նչ նորա ներքին նըպատակն:

Յայտնի է թէ ամեն բան իւր սահմանն ունի և ամեն գործ իւր ժամանակը. Աստուած, որ շնորհած է մարդուն այլ և այլ կիրքեր եւ զանազան զգացումներ, անշուշտ յօգուտ իւր գործածութեան համար է. ուստի մարդն իւր բանականութեամբը անոնց իւրաքանչիւրը իւր օրինաւոր սահմանին մէջ ըստ պարագայից եւ ըստ յարմարութեան ՚ի գործ դնելու պարտաւոր է խոհական իմաստութեամբ և լուրջ դատողութեամբ, որ պէս զի որ և է մի չախազանցութեամբ

փոխանակ օգտելու չը վնասուի:

Օրինակի համար, մարդն ունի իւր մէջ սիրոյ, ատելութեան, բարկութեան և պատուոյ զգացումներ, որոց իւրաքանչիւրն ևս ունին իրենց կարեւոր պաշտօններն. բարւոյն և գեղեցկին սէրը մարդս կ'ազնուացնէ և կը կատարելագործէ. չարութեան եւ վատութեան դէմ ատելութիւնը մարդս հեռի կը պահէ ամեն տեսակ մոլութենէ և կը զօրացնէ նորա սիրտը առաքինութեան և ուղղութեան մէջ, արդար բարկութիւնը պաշտպան կը հանդիսանայ մարդոյ սուրբ և նուիրական իրաւանց և պատուար չարութեան կամ անիրաւութեան դէմ. իսկ պատուոյ զգացումն իբրեւ իման բարձրութեան և յառաջադիմութեան մարդոյն՝ միշտ հեռի կը պահէ զնա ամեն տեսակ ցածութենէ եւ նուաստութենէ գրգռելով նորա արժանապատուութիւնը: Իսկ ընդհակառակն եթէ սէրն եղծլինի, ատելութիւնը նախանձու ծընունդ, բարկութիւնը անարդար եւ արժանապատուութեան զգացումն մինչեւ ամբարտաւանութեան հասնի, բնականաբար փոխանակ օգտի վնաս կը պատճառեն:

Աստուածորդին Յիսուս որ միանգամայն մարդ լինելով գիտէր թէ ինչ կը կրէ մարդն՝ իւր բոլոր կենաց մէջ իւր ամեն քարոզութիւն կ'աշխատէր դատաւարաւ կել մարդը, կը թել նորա հոգին և ազնուացնէ զգացումները՝ և որովհետեւ մարդկային միութեան, եղբայրութեան և բարօրութեան ամենադիւաւոր տարրը սէրն է, այս պատճառաւ իբրեւ հայր հասարակաց եւ իբրեւ պաշտօնեայ խաղաղութեան սոյն ըզգացումը աւելի զօրացնելու և կ'ազդուրելու համար հեղութեան, համբերութեան, անոխակալութեան եւ անյիշատչարութեան պատուէրներ ու

ւանդած է մարդկութեան, որպէս զի անձնական և աննշան խնդրոց առթիւ եղբայր եղբոր դէմ զինելով հասարակութեան խաղաղութիւնը և անդորրութիւնը չը վնասէր. այս գովելի եւ սուրբ նպատակաւ կը յորդորէ խաղաղասէր մարդն՝ ի սէր խաղաղութեան համբերատար գտանել շատ անգամ զրկանաց և անիրաւութեանց, մինչեւ անգամ աջ երեսիդ ապտակ անողին ձախն ևս դարձնելու, հանդերձդ առնողին շապիկդ եւս տալու հրաման կ'ընէ. որպէս զի զրկող անիրաւն խղճահարուելով հարստահարուողի հեղահոգի համբերատարութենէ ստորջանայ իւր անիրաւ արարմանց վերայ և ուղղէ իւր սխալը:

Յիսուս՝ ահաւասիկ սոյն նուիրական վարդապետութեան գործնականն է, որ ցոյց կը տայ հրէական այն անիւրաւ ատենին մէջ համբերութեամբ կրելով ամեն տեսակ անիրաւութիւն, սուտ ամբաստանութիւն և զրկանք, մինչեւ որ նոցա անխիղճ և անուղղայ յամառութիւնն ի չարութեան՝ աշխարհի առջեւ մերկապարանոց կը խայտառակէ և զինի այնու կենդանի օրինակաւ իւր հետեւողաց և բոլոր աշխարհի ցոյց տալու համար թէ առաւել քան զայն զինանիւր նուաստանալ է և հակառակ իսկ արդարութեան, հեղութեան, եղբայրսիրութեան եւ մարդասիրութեան զգացմանց եւ ըսկըզանց՝ իւր արդար և իրաւացի բողոքովը կ'ուսուցանէ մարդկանց և կը խորխուսէ չերկնել բնաւ անիրաւներէ և բռնաւորներէ, այլ երբ կը տեսնուի որ արդարութիւն և ճշմարտութիւն հրապարակաւ ոտնակոխ կը լինին, հարկ է համարձակ եւ անվհէր բողոքել զանոնք սանհարգներու դէմ արհամարհելով ամեն երկիւղ եւ ըստառնալիք. քանզի ճշմարտութեան

և արդարութեան արժէքն այնքան մեծ և այնքան բարձր է, որուն հետ ոչ մի բան չէ կարելի հաւասարալնել աշխարհի վրայ. այս պատճառաւ ի սէր այն նուիրական և յաւիտենական ըսկըզանց եթէ հարկ լինի և ժամանակ կը պահանջէ, աշխարհի վրայ ամեն բան զոհելու է արիաքար պաշտպան հանդիսանալով անոնց. բռնաւորաց ահն ու արհաւիրքն երբէք չեն կարող դըղդղել զգացման տէր նախանդիր և արի ակոյեանի մը հոգին. քանզի նոքա եւս մարդ գոյով ինչ կարող են ընել իրենց նման մարդոյն, եթէ ոչ նիւթական զօրութեան առաւելութեամբ չարչարել, հալածել, տանջել, խոշտանգել և վերջապէս մահացնել. սակայն իրաւանց եւ արդարութեան համար մեռանիլն եւս անմահութիւն է. վասն որոյ երբ սուրբ և արդար իրաւունքներ կը բռնաւորուին, անօգ եւ անպաշտպան թշուառներ անգթօրէն կը հարստահարուին, նուիրական եւ պաշտելի սրբաւայրեր անպատուելով սիրտ և զգացմունք կը վերաւորուին, այն ատեն անհրաժեշտ և սուրբ սրբաւորութիւն է այն մարդուն, որ ունի սիրտ և զգացում, բորբոքիլ արդար բարկութեամբ և իբրեւ գաւազան բարկութեան Աստուծոյ, շանթահարել և պատժել արդարութեան և իրաւանց կամ լաւ եւս է ասել, Աստուծոյ և մարդկութեան թշնամին և այսպիսի մի գործ Աստուծոյ կամաց և սուրբ Աւետարանի սկզբանց հակառակ չը լինէլէն զատ նաև մեծ և Աստուծաճաճոյ սուրբինութիւն է, որոյ բաղմամբ օրինակները ոչ միայն ազգաց և քաղաքական պատմութեանց՝ այլ և նոյն իսկ Ս. Գրոց պատմական մասերուն մէջ կը տեսնուին:

Աբրահամ մեծ Նահապետն, որ Աստուծոյ ամենահաւատարիմ ծա-

առաջին էր եւ նորա ամեն ակնարկութեանց հպատակ, երբ կը լսէ Ղովտայ ստացուածոց և մարդկանց գերուիլը դրացի բռնաւորներէ, տնմիջապէս իւր գերդաստանի և ծառայից փոքրիկ գրնդին գլուխն անցած իբրեւ արծիւ կը հասնի այն սեւադէմ ագռաւներու եւ ըամակին վրայ, զորս անխնայ պատժելով, նոցա տարած գերիներն ու աւաւրը վերադարձնելէն զատ իրենցմէ եւս բազում աւար կ'առնէ, զորս իբրեւ հաճոյական զոհ Աստուծոյ նուիրելով կ'օրհնուի նորա սուրբ քահանայապետէն : Եգիպտական բռնաւորք որք այնքան ժամանակ անգթութեամբ հարստահարեցին և չարհարեցին Խորաշերտ, կը տեսնենք թէ նոյն ինքն Աստուած ինչպէս վրէժխնդիր կը լինի այն անիրաւութեց և ինչ դառն պատիժնէ ընդ նոցա չարեաց փոխարէնը կը վճարէ : Սինչեւ որ հարստահարեալ և չարհարեալ բազմութիւնը կ'աղատէ նոցա բռնութեան ճիրանէն : դարձեալ Աստուածաշունչի մէջ Մակաբայեցւոց գիրքն ո՞չ ապաքէն ծայրէ 'ի ծայր լի է արդարութեան, ճշմարտութեան եւ իրաւանց համար նահատակութեան սխրալի արարքներով, ուր կը տեսնուի յայտնապէս որ Աստուծոյ բարձր բազուկն զօրավիգ և օգնական կը լինի այն նախանձախնդիր արի ախոյաններու բազուկները զօրացունելով ամբարիշտ հեթանոսաց դէմ, և կ'աղատէ ամբողջ ազգ մը հարստահարութենէ եւ անպատուութենէ մի կրօնասէր և ազգասէր գերդաստանի միջոցաւ : Եւ նոյն իսկ Յիսուս ինքն ո՞չ ապաքէն խորաշերտն 'ի ձեռքին տաճար մտնելով՝ բռնութեամբ և բանիւ դուրս վնասեց անտի սեղանաւորներն ու սղաւնաւաճառները նոցա սեղաններն ու տօթութիւնները խորտակելով, ուրեմն Յիսուս իւր այս գործն միթէ հակառակ դուր-

ճեց ըսենք իւր այն վարդապետութեանց, որով կը պատուիրէ մարդոց աջ երեսին ապտակ ածողին ձախն ևս դարձնել, ոչ երբէք : քանզի այն խաղաղասիրական վարդապետութիւնը, ինչպէս վերեւ բացատրեցինք այն նը պատակաւ է, որ 'ի պահպանութիւն խաղաղութեան եթէ հարկ լինի երբեմն իրաւունքներ եւս զոհել, մեծ առաքինութիւն է : իսկ ընդհակառակն երբ կը տեսնուի թէ այն զիջողութեամբ չարն աւելի պիտի խրախուսի իւր չարութեան մէջ, այն տեսակ զոհողութիւնը հակառակ է Յիսուսի վարդապետութեան : քանզի նա որ մարդկային ազգի Փրկիչն ու բարերարն է, երբէք չ'ասէր թէ անխիղճ և վայրենաբարոյ դադանի մը առաջ ձեռքերդ կապած կեցիր, որ նորա գաղանուութեան տարապարտ զոհ լինիս :

Այսպէս թիւր իմանալ Ս. Աւետարանի միտքը՝ խորին տգիտութիւն և յետին կուրութեան գործ է : այսպէս թիւր մեկնել և քարոզել ժողովրդեան՝ մարդասպանութեան և ազգասպանութեան ոճիր է, և ահա այս տգիտութեան եւ թիւրիմացութեան դառն հետեւանքն է որ այսօր կը կրէ ամենէն աւելի մեր տառապալիք և թշուառ Աղգն : Քանզի ժամանակաց բարբարոսութեան և աւերածի հեղեղներն երբ Հայ հայրենիքը եւս ուղղելով տալին ու վրայ ըրին և հայաստանի որդիները բռնութեամբ օտար կլիմայներու և օտար աստղերու տակ գերի վարեցին, այն ատենէն 'ի վեր զրկուելով խեղճ Հայ ժողովուրդն թէ նիւթական և թէ բարոյական զօրութենէ, գլորեցաւ և անկաւ մի այնպիսի խորին տգիտութեան մէջ, որ հետզհետէ խամրեց և խորշակահար ըրաւ նորա թէ կրօնական և թէ ազգային ըզգացումները, այս պատճառաւ արդէն

չատերն իրենց տիրապետող ազգաց
ազգեցուծեան ենթարկուելով նոցա
ընդարձակութեան մէջ խորասուզուե-
ցան . իսկ փոքր մնացորդ մը այն մեծ
և բազմաթիւ ազգէն, որ տոկալով մին-
չեւ ներկայ դարս իւր անունը և գո-
յութիւնը պահած է մի միայն կրօնա-
կան կապով, այն եւս այսօր մի այնպի-
սի ցաւալի կացութիւն ունի, որ ըզ-
մարդ յարաստուս կը փղծկէ : Այս
գիտութեան, լուսոյ, ազատութեան
և հաւասարութեան դարուն մէջ մի-
այն Հայ ազգն է որ դեռ տգիտու-
թեան խաւարի մէջ կ'ապրի և իբրեւ
ստրուկ անխիղճ բռնաւորներէ կը կե-
ղեքուի . այս Հայ ժողովրդեան մի մեծ
և բազմաթիւ մասն է, որ այսօր հայ-
աստանի խորերուն մէջ ամեն տեսակ
հալածանք և զրկանք կը կրէ . նոցա Ս.
Եղիշեցիները կը պղծուին, նոցա ինչ-
քեր կը կողպտուին, նոցա ընտանիք-
ներ կը բառնաբարուին, նոցա կոյս
աղջիկներ բռնի կ'առուանգուին, նոցա
որդիքն եւ սրտի աղիքը իրենց աչքի
առջեւ անգթաբար սրախտղիտող կը լի-
նին . այս ամենը կը տեսնեն Հայք եւ
միայն լալով կը մխիթարուին . արգարե
հայ լինելու է, որ կարելի լինի համբերել
և տանել այսքան զրկանաց և անպա-
տուութեան, բայց ինչ է այս անտար-
բերութեան և անզգայութեան պատ-
ճառ . ինչպէս այս հարստահարեալ
ժողովուրդն չը յուշուիր, չը գրգռուիր
և սուր 'ի ձեռին չը պաշտպաներ իւր
սրտիւր և իւր կեանքը այն դաղանա-
բարոյ բռնաւորաց դէմ . արդեօք կ'եր-
կըն՞ի նոցա բազմութենէն և զօրու-
թենէն . բայց մահէն ինչո՞ւ պիտի
վախնան անոնք . քանի որ արդէն ամեն
օր և ամեն ժամ կենդանի մեռեալներ
են, որ հարիւր անգամ վատ է իրա-
կան մահէն, արդեօք կառավարութե-
նէն կը վախնան թէ մի գուցէ ղերենք

ապստամբ համարի, բայց կառավա-
րութիւնն արդէն փորձով կը ճանաչէ
հայոց հաւատարիմ և տիրասէր բնա-
ւորութիւնը . նա մանաւանդ այն բար-
բարոններն արդէն ամպստամբ են կա-
ռավարութեան դէմ և այն անգթու-
թիւնները կը գործեն հակառակ կա-
մաց բարեխնամ տէրութեան, որ ար-
դէն մեծ հոգ ունի իւր ամեն կարգի
և աստիճանի հպատակաց հաւասա-
րութեան և հանգստութեան մասին .
հետեւաբար այն բարբարոսաց դէմ
պատերազմին մեծագոր տէրութեան
ծառայութիւն մատուցանել է . ուրե-
մըն ինչ է Հայ ժողովրդի այն թուլա-
մորթութեան եւ կնամարդութեան
պատճառը . ես ուրիշ պատճառ չեմ
կարող գտնել, բայց եթէ տգիտու-
թիւն և դարձեալ տգիտութիւն . քան-
զի այն մարդն, որոյ միտքը բնաւ մշա-
կուած չէ, այն մարդը որ իւր ոչ եկե-
ղեցւոյ և ոչ ազգի պատմութեան տե-
ղեկութիւն ունի, այն մարդը որ բը-
նաւ չը հասկնար ոչ իւր եկեղեցւոյ
մէջ երգուած ժամերգութիւնը եւ
ոչ կարգացուած գիրք, այս տեսակ մի
մարդէ ինչպէ՞ս կարելի է պահանջել ազ-
գի և կրօնի զգացում . քանզի Հայաստա-
նի խորերու այն խեղճ ժողովուրդք,
որք այսպիսի մահաբեր տգիտութեան
և խորին խաւարի մէջ կ'ապրին, ար-
դէն չունին այն բարոյական զօրութիւ-
նը, որով զգան շարժին և մահ . քան ըզ-
կեանս լաւ համարելով խիղախեն ի-
րենց արենարբու թշնամեոյն դէմ
և մեռնելով կամ մեռցունելով ազա-
տուին միանգամ ընդ միշտ դառն եւ
վշտակիր կեանքէն, ուրեմն Հայն այն
բարբարոս քիւրտերու գաղանային ճի-
րաններէն ազատուելու և հանգստու-
թեան երես տեսնելու համար հարկ
է նախ իւր հոգին ու սիրտը մշակէ
իւր զգացումները արթնցունէ և կազ-

դուրէ, որպէս զի բարոյական զօրութիւն և արիութիւն ունենայ, որ շատ բարձր և վեր է նիւթականէն. բայց այս զօրութիւնը որո՞ւ միջոցաւ պիտի կարողանայ ձեռք ձգել. միթէ իւր խեղճ և իրեն պէս անգէտ ողորմելի քահանայից կամ վարդապետաց միջոցաւ, որք ժողովրդեան պէս արդէն նոյն բարբարոսաց ահիւն ու երկիւղով պաշարուած թերեւս աւելի պատճառ կը լինին ժողովրդեան և ևս թմբորութեան և անշարժութեան թիւր և սխալ քարոզկարդալով, համբերութեան համոզելով զնոսա, թէ այդ կեղեքմանց և զրկանաց դէմ լռելն մեծ և Աստուածահաճոյ առաքինութիւն է եւ թէ թշնամւոյն դէմ դնողը հակառակած կը լինի Քրիստոսի այն վարդապետութեան, որով կը պատուիրէ թշնամւոյն ամեն ուզածը կատարել և ամեն բան ձին համբերել. ա՛ռ քեզ այլանդակ Աստուածաբանութիւն, որ զհոգի և զմարմին միանգամայն կը մահացունէ, և այս կը յուսացուի արդարեւ այն քահանայներէն՝ որոց շատերն պարզ ընթերցումն անգամ չեն կարող շիտակ կարդալ, ուր մնաց որ Ս. Գրոց միտքն ու հոգին իմանան և ըմբռնեն և ժողովրդեան ուղղութեամբ ուսուցանեն :

Ուրեմն թէ ի՞նչ միջոցաւ կարելի է կրթել և լուսաւորել մեր հայաստանաբնակ այն ողորմելի և կարեկցութե արժանի եղբայրները, ուրիշ անգամի թողով առ այժմ կը վերջացունենք մեր յօդուածը :

Գ. Ս. Շահանէան :

ՊԱՏՄԱԿԱՆ

(Շարունակութիւն, տես թիւ 8.)

Երեք Տէրութեանց դեսպաններուն մեկնիլն :

Արդէն յառաջագոյն ասացինք, թէ յիշեալ երեք Տէրութիւնք լաւ իմացան՝ որ Յունաց ի համար առաջարկուած խնդիրը չ'պիտի ընդունուի : Երեք դեսպանք 'ի միասին յայտնապէս 'ի պաշտօնէ ծանուցողրէր խրկեցին թէ՛ 'ի Կ. Պօլսոյ իրենց երկիրը պիտի մեկնին. որուն վերայ Բ. Դուռը դարձեալ ժողով կազմելով իւրաքանչիւրին հետ բանակցութեան մտաւ, և հետեւեալ խոստումներն բրաւ. « Երբ Յոյնք հնազանդութիւն յանձն առնուն, Տէրութեան կողմէն նոցա ապրտամբութեան վրայօք երբէք բան մի չ'պիտի խօսուի, և ըստ առաջնոյն Կայսերական ներողութեան և խնամոյց արժանի պիտի լինին, և ապտամբութեան օրէն 'ի վեր իրենց վերայ ծանրացած գլխահարկը եւ Տէրութեան տուրքը բոլորովին պիտի շնորհուին. եւ հնազանդութեան օրէն սկսեալ ամբողջ տարի մի բոլոր պէտք եղած տուրքերէն ազատ պիտի թողուին, և ևնքեանք Կայսերական ամեն տեսակ գթութեանց եւ շնորհաց արժանի պիտի լինին » : Բայց նոքա ոչ երբէք յօժարեցան յանձն առնուլ, այլ իրենց առաջին առաջարկութեանց վերայ հաստատուն մնացին, և վերջապէս երեքն ալ միասին 'ի Կ. Պօլսէն մեկնեցան և իրենց երկիրները գնացին, և յետոյ, նոցա հպատակաց շատերն ալ անտի հալածեցան :